

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԻ ԿՈՎՍԱԿԱՆ ԴԱՎԱՌԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (X Դ.)

ԱՐՄԵՆ ՂԱՐԱԴՅՈՋՅԱՆ

Սյունյաց աշխարհի Կովսական գավառի մասին եղած մատենագրական տեղեկությունները սուղ են: Կովսականն առաջին անգամ հիշատակվում է VII դ. «Աշխարհացոյցում», որպես Սյունիքի գավառներից մեկը¹: IX դ. առաջին կեսում այն Սյունյաց իշխանական տներից մեկի սեփականությունն էր²: Կովսականի բնակավայրերը հիշատակվում են X դ. Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին ցուցակում³: 1086 թ. կազմված մի կավածագրից երևում է, որ Սյունյաց Գրիգոր թագավորի օրոք Հասան իշխանը գավառը ազատագրել է Փատլուն ամիրայից⁴: Կովսականի մասին այլ տեղեկություններ չկան: Հայտնի է միայն, որ XIII դ. այն կոչվում էր Գրհամ՝ գավառի նոր կենտրոնի անունով⁵:

Գավառի սահմանների մասին հայտնվել են մի քանի կարծիքներ:

Ըստ Ղ. Ալիշանի, գավառը հիմնականում զբաղեցրել է Բասուտ (Մավ) գետի հովիտը և Ողջի գետի աջակողմյան մի քանի վտակների ավազանները: Գավառի արևմտյան սահմանն անցել է Խուստուփի հյուսիսային լեռնաճյուղով և Բասուտի արևմտյան ջրբաժանով, հարավ-արևելյանը՝ Արաքսով, հյուսիս-արևելյանը՝ Ողջի գետով, որի ստորին հոսանքի շրջանում այն ձգվել է գետի աջ ափին դուգահեռ⁶: Ս. Նրեմյանի կարծիքով գավառը համապատասխանել է ներկայիս Ադրբեջանական ՍՍՀ Զանգեզանի շրջանին⁷, որը նրա աշխատությունը կից քարտեզում համապատասխանում է Ողջի գետի ստորին ավազանին⁸: Թ. Հակոբյանը որոշել է գավառի սահմաններն այնպես, ինչպես Ղ. Ալիշանը, միայն այն տարբերությամբ, որ ըստ նրա Կովսականի արևելյան սահմանն ընթացել է Ողջի գետով, ներկայիս Շարիփուլ և Փրշևան երկաթուղային կայարանների մոտ անցնելով գետը և ընդգրկելով նրա ձախափնյա մի փոքրիկ շրջանը⁹: Բ. Հարությունյանի կարծիքով Կովսականը զբաղեցրել է Ղափանի շրջանի հարավ-արևելյան և Ադրբեջանական ՍՍՀ Զանգեզանի շրջանի հարավային մասերը: Հարավից և արևելքից գավառի սահմանն են եղել Արաքս և Հագարի գետերը¹⁰:

1 Ս. Ս. Նրեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 109:

2 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանն Դ Թրքէլեան. արքայիսկոպոսի Սինեաց», Թիֆլիս, 1910, էջ 208—209:

3 Նույն տեղում, էջ 519—520:

4 Նույն տեղում, էջ 326:

5 Նույն տեղում, էջ 13:

6 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 286:

7 Ս. Ս. Նրեմյան, նշվ. աշխ., էջ 60:

8 Նույն տեղում, տե՛ս քարտեզը:

9 Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 104—105:

10 «Հայ մոզղոլոգի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 126:

Այսպիսով, կարծիքներ հայտնելով Կովսական գավառի սահմանների մասին, նշված հեղինակները նկատի չեն ունեցել պատմական ժամանակաշրջանները: Տաթևի վանքի հարկատու գյուղերի հին ցուցակում նշված Կովսական գավառի բնակավայրերի ցանկը, որ վերցրել ենք Ս. Օրբելյանի Պատմության ամենահին ձեռագրից, հնարավորություն է ընձեռում ճշգրտելու գավառի սահմանները X դ.: Ստորև ներկայացնում ենք այդ ցուցակում նշված գյուղերի մի մասի տեղագրությունը:

Բեցան ժք, Բեխ զ, Շտատուք զ, Ողոհի ժք, Փառաւարտո վանք զ, Բեխելերջի զ, Հուսկոր զ, Վաթնատուք ժ, Բոստ է, Մառագատ ժք, Կակավանք զ, Մենիք զ, Թաթումարագ զ, Դալք Ե, Մարուր ը, Վարոսի վանք է, Գոն Ե, Հոյնոցկոր Ե, Երեգիք է, Տախարեան է, Համուրք զ, Վառամաղբիւր զ, Մաճկան զ, Մանուշակի մարգ զ, Նախկոտան զ, Դիրքն ը, Լիմ ը, Չամտուր ը, Լիմ Վերին ը, Լիմախովիտ զ, Փշատեցարաւր զ, Դից մայրի զ, Բերքնի ը, Աշտարակ զ, Արգապ զ, Կերեն ժք, Սղաթաղք ժք, Շիկահողք ժք, Պաւղոսի վանք է, Վաղթանկաձոր է, Թեղոյ Կից է, Շաշի գետ է, Արցախամայրի ժէ, Ծանաղու ի, Մառի զ, Բարձուֆաղք զ, Լուցմայրի զ, Նորաշինիկ ը, Տորվանտո ժք, Խողաձոր է, Տոնակերտ է, Մորի ժք, Կիծ ժեռ¹¹,

ՄԱՌԱԳՆԵՏ—վկայված է Մառագաթ¹², Մառագաթ¹³, Մառագատ¹⁴, Մառագետ¹⁵ ընթերցումներով: Ղափանի շրջանի Ճակատեն գյուղից 3 կմ հարավ, Շիկահող գյուղը տանող ճանապարհի աջ կողմում, կան բնակատեղի հետքեր, որոնք Ճակատենի բնակիչներին հայտնի են «Սեկեղեցու խութ» և «Մուկետ» անուններով: Վերջինս Մառագետի բարբառային արտասանությունն է:

Տեղանունը կազմված է մառ¹⁶, որը նշանակում է «մշուշ», և «գետ» բառերից:

Բ Ե Խ—871 թ. մի կալվածագրից հայտնի է, որ Բեխը Տաթևի վանքի սեփականությունն էր և փոխանակվել է Զեվանշեր իշխանին պատկանող Բաղք գավառի Արուբս գյուղի հետ. «Յայսմ ժամանակի իշխան մի Զեվանշեր անուն՝ որդի Սահակայ՝ Սիւնեաց տեառն, գայ առ Տէր Սաղոմոն և իւնգրէ ի նմանէ զգիւղն Բեխ որ ի Կովսական գավառի, որ էր սեպհական ժառանգութիւն սուրբ խաչին և եպիսկոպոսացն ի հին ժամանակաց. և փոխանակէ զիր սեպհական գիւղն Արուբս որ ի Բաղք գավառի. որ հավանեալ եպիսկոպոսին՝ տայ զԲեխ և առնու զԱրուբս գիւղ. և զրեն զվճիռ պայմանին այսպես. «յՅ20 թուա-

¹¹ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 6271, էջ 336ր: Բնակավայրերի անվանաձևերը պարզելիս հիմք ենք դնում տեղացիների կողմից գործածվող այն անունները, որոնք հանդիպում են ձեռագրերում: Անդրադարձել ենք նաև Կովսականի տարածքում գտնվող մի քանի այլ տեղանունների, որոնք թեև աղբյուրներում չեն վկայվել, սակայն հնարավորին չափով ամրագրացնում են մեր գիտելիքները գավառի բնակավայրերի մասին:

¹² Ս տ ե փ ա ն ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե Մ Ա Ն, էջ 520:

¹³ «Ս ա Ե փ ա ն ն ո ս ի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 377:

¹⁴ Մատենադարան, ձեռ. № 6271, էջ 336ր, № 7503, էջ 228ա, № 2869, էջ 223ա, № 1488, էջ 211ր, № 6520, էջ 141ա, № 2698, էջ 177ա, № 6546, էջ 220ր:

¹⁵ Նույն տեղում, ձեռ. № 2924, էջ 152ա, № 1488, էջ 215ա, № 6271, էջ 338ր:

¹⁶ 2. 2. Ա ճ ա ո յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1926, էջ 849:

կանութեանս Հայոց...»¹⁷։ Ղափանի շրջանում այժմ կա Բեխ անունով գյուղ¹⁸ և գյուղատեղի՝ նույն շրջանի Շիկահող գյուղից 2 կմ արևելք։ Վերահիշյալ տեղեկությունը վերաբերում է գյուղին։ Դա պարզորոշ երևում է Արուքս գյուղի սահմանների նկարագրությունից. «Եւ սահմանքն այս է Արուքսայ. յարևելից կողմանէ Կշմատուք է սահմանակից. և յարևմտից կողմանէ Հման դրախտ է նույն սուրբ խաչիդ սահման. և ք հարաւոյ կողմանէ հին ջրագնացովդ է մինչև ի Բեխոյ սահմանն, և ընդ հիւսիսոյ կողմանէ Կավարտոյ սահմանովն է»¹⁹։ Ինչպես տեսնում ենք, Արուքս գյուղի սահմանների համար



հյուսիսից կողմնորոշիչ է վկայված Կավարտը, իսկ հարավից՝ Բեխը։ Իրականում էլ այս գյուղերը տեղագրված են հյուսիս-հարավ ուղղությամբ²⁰։ Բեխը հիշատակվում է նաև XVII դ. հիշատակարաններում²¹։ Այն վկայված է նաև XVIII դ. 20-ական թվականների կեսերին Սյունիքում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ. «Ապա յետ այսորիկ իբրև ստկաւ ինչ ժամանակ ի վերայ անցանէր, ասպատակիչ Փաշայն օսմանցւոց բազում զօրօք դիմէր գալոյ, և ի Բէխ կոչեցեալ գիւղն քանակէր, և իբր զաւուրս միոյ շաբաթու բազում հնարս խորհէր ի վերայ Դաւթի և զօրականացն՝ որսալ զնոսա նենգութեամբ, և զոչինչ կարաց առնել ամենեկին։ Այլ զօրականքն Դաւթի

17 Ս տ ե փ ա ն ն ո ս Օ Ր Բ Ե Լ յ ա ն (Թիֆլիսյան հրատ.), էջ 216—217։

18 «Հայկական ՍՍՌ վարչա-տեղիտորիալ բաժանումը», Երևան, 1955, էջ 52։

19 Ս տ ե փ ա ն ն ո ս Օ Ր Բ Ե Լ յ ա ն (Թիֆլիսյան հրատ.), էջ 218։

20 «Карта ССР Армении», Ростов-на-Дону, 1926.

21 «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1601—1620)», հ. Ա, կազմեցին՝ Վ. Հ ա կ ո բ յ ա ն, Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Երևան, 1974, էջ 538։

ի գիշերի միում ի վերայ հասին նոցա, հարին կոտորեցին զբազումս ի նոցանէ, և զփաշայն հալածական արարին»²²:

ՓԱՌԱՎԱՐՏՈՒ ՎԱՆՔ—վկայված է Փառաւարտութեան վանք²³, Փառաւարտութեան վանք²⁴, Փառաւորտա վանք²⁵, Փառաւարտոյ վանք²⁶ ընթերցումներով: Ըստ Ղ. Ալիշանի, այն գտնվել է Բեխ գյուղի մոտ²⁷, Ս. Բարխուդարյանի կարծիքով Բեխ գյուղի մոտ գտնվող և տեղացիների կողմից Անապատ կոչվող վանքի ավերակները Փառավարտութեան վանքին են²⁸: Բեխ գյուղը և Փառավարտութեան վանքը (ըստ երևույթին իրար մոտ գտնվելու հետևանքով) «գյուղացուցակում» նշված են միմյանցից ոչ հեռու: Հետևաբար, հավանական է Փառավարտութեան վանքի նույնացումը Անապատի հետ:

ԲՆԽՆՎԵՐՋԻ—տեղանունը հանդիպում է Բեխեքերի²⁹, Բեխեքերի³⁰ ընթերցումներով: Այս գյուղի վերաբերյալ Ղ. Ալիշանը գրել է. «Բեխեքերի, արդ կոչեցյալ և գրյալ Պաղապուրճի...»³¹: Վերջինս հիշվում է Տաթևի թեմի պտղիցուցակում, Աճանան գավառում, Պաղավերճ³² ձևով, իսկ հիշատակարաններում՝ Բաղավերճ³³: Համապատասխանում է Ղափանի շրջանի Բաղաբուրջ գյուղին³⁴:

ԵՐԵՎԱՆԻ—Ղափանի շրջանի Ճակատեն գյուղից 2 կմ հարավ, Շիկահող գյուղը տանող ճանապարհի ձախ կողմում, տեղացիների վկայությամբ, եղել է Իրիգիս անվամբ բնակատեղ: Այս անունով բնակավայր հիշվում է Տաթևի թեմի պտղիցուցակում՝ հետագայի Գիլարեք գավառում³⁵: Իրիգիս անունը, անկասկած, բխում է Երեզրից, որովհետև վերջինս հայերենի հայկական հոլովում կարող էր դառնալ Երեզիս, իսկ և> ի հնչյունափոխության դեպքում՝ Իրիգիս:

ԿԱԿԱՎԱՆՔ—վկայված է Կակավանք³⁶, Գագավանք³⁷ ընթերցումներով:

Ղափանի շրջանի Բաղաբուրջ գյուղից 1,5 կմ հարավ կան եկեղեցական շինությունների ավերակներ, որոնց տեղացիներն անվանում են Վանք: Համանուն

22 «Ընտիր պատմութիւն Գաւիթ բէգին եւ պատերազմաց հայոց խափանու, որք եղեն ընդ դէմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722 եւ հայոց 1171», Վաղարշապատ, 1871, էջ 57:

23 Մատենադարան, ձեռ. № 6271, էջ 336ա, № 1488, էջ 211ր:

24 Նույն տեղում, ձեռ. № 7503, էջ 227բ, № 6546, էջ 220բ, № 2698, էջ 177ա, № 6520, էջ 141ա:

25 Նույն տեղում, ձեռ. № 2868, էջ 129բ:

26 Ստեփաննոս Օրբելյան (թիֆլիսյան հրատ.), էջ 520:

27 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 218:

28 «Դիվան հայ վիմագրութեան», պրակ II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 140:

29 Մատենադարան, ձեռ. № 6271, էջ 336բ, № 1488, էջ 211ր, № 6546, էջ 220բ, № 2869, էջ 223ա, № 2868, էջ 129բ:

30 Նույն տեղում, ձեռ. № 6520, էջ 141ա, № 7503, էջ 227բ, № 2698, էջ 177ա:

31 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 287:

32 «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելյանի», Երևան, 1942, հավելված, էջ 42:

33 «Հայերէն ձեռագրերի Ժէ գրքի հիշատակարաններ (1801—1820)», հ. Ա, էջ 475:

34 «Հայկական ՍՍՌ վարչա-տնտեսական քառանկար», էջ 51:

35 «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելյանի», էջ 41:

36 Մատենադարան, ձեռ. № 6271, էջ 336բ, № 6520, էջ 141ա, № 2698, էջ 177ա, № 6546, էջ 220բ, № 2869, էջ 223ա, № 2924, էջ 152ա, № 1488, էջ 211ր, № 7503, էջ 223ա:

37 Ստեփաննոս Օրբելյան (թիֆլիսյան հրատ.), էջ 520:

բնակավայրեր հիշվում են հետագայի Աճանան գավառում³⁸։ Այն վայրը, որտեղ գտնվում են հիշյալ շինությունների ավերակները, ժամանակին մտնում էր Կովսականի տարածքի մեջ, ուստի միանգամայն հնարավոր է, որ այն համապատասխանում է Կովսական գավառի՝ «գյուղացուցակում» նշված վանքերից մեկին։ «Գյուղացուցակում» նշված գյուղերի հաջորդականությունը համեմատելով գավառի՝ իրենց անունները պահպանած գյուղատեղիների տեղաբաշխման հետ, կարելի է եզրակացնել, որ այդ ավերակները պատկանում են Կակավանքին, որին տեղացիները պարզապես կոչել են Վանք։

ԹԱԹՈՒ ՄԱՐԱԳ—վկայված է Թաթումարաք³⁹, Թաթու մարաք⁴⁰ ձևերով։ Ղափանի շրջանի ճակատեն գյուղից 3 կմ հարավ՝ Մակ քար լեռնաշղթայի վրա, հղել է բնակավայր, որի տեղում այժմ անասնապահական ֆերմա է։ Այն տեղագրական ժամանակակից մի քարտեզում նշված է Թուժամերիկ⁴¹ անունով։ Կարծում ենք, որ հիշյալ բնակավայրն այդտեղ է գտնվել։

ԳԻՐԲ—հայտնի է Դիրքն⁴², Գիրկն⁴³ լեռնաշղթաներով։ Ղափանի շրջանի Գեղանուշ գյուղից 4 կմ հարավ կան գյուղատեղի և գերեզմանոցի հետքեր, որոնց տեղացիներն անվանում են Կիրատեղ (Գրատեղ)։ Նրանց կարծիքով գյուղատեղի Կիրատեղ անունը կապված է տեղում բազմաթիվ գրքեր պահելու հետ։

ԳՈՆ—այս բնակավայրի մասին Ղ. Ալիշանը գրել է. «Մերձ ի գետն (Ջավնդուր) կա և փոքրիկ գյուղն Կյուն կոչեցյալ, որ թվի հինն Գոն»⁴⁴։ Նման տեղագրությունն անորոշ է, որովհետև չի պարզվում, թե որտեղ է գտնվել բնակավայրը։ Տեղագրական քարտեզներից մեկում Գոնը հիշվում է Գյուն⁴⁵ ձևով, իսկ վիճակագրական մի ուսումնասիրությունում՝ Գյունկիշլակ, որպես Ադրբեջանական ՍՍՀ Զանգեզուրի շրջանի բնակավայր⁴⁶։ Այդ բնակավայրը գտնվում է Ղափանից 4 կմ հարավ-արևելք, Ողջի գետի աջ ափին։

ՇԻԿԱՆՈՂԲ—վկայված է Շիկահողբ⁴⁷, Շէկահողբ⁴⁸ ձևերով։ ՀՍՍՀ Ղափանի շրջանում, նախկին Կովսական գավառի տարածքում, գոյություն ունի համանուն բնակավայր⁴⁹, որը, անկասկած, «գյուղացուցակի» Շիկահողբն է։

38 «Ժամանակագրութիւն Ս տ ե փ ա ն ն ո ս Ի Օ ր ք է լ և ա ն ի», հավելված, էջ 42։

39 Մատենադարան, ձեռ. № 6271, էջ 336բ, № 2924, էջ 152ա, № 2869, էջ 223ա, № 7503, էջ 228ա, № 2869, էջ 223ա։

40 Ս տ ե փ ա ն ն ո ս Օ ր ք է լ յ ա ն (Թիֆլիսյան հրատ.), էջ 520, Մատենադարան, ձեռ. № 2868, էջ 129բ, № 2698, էջ 177ա, № 6546, էջ 220բ, № 1488, էջ 211բ, № 6520, էջ 141ա, № 7503, էջ 228ա։

41 Տեղեկությունը վերցված է հատուկ նշանակության տեղագրական քարտեզից։

42 Մատենադարան, ձեռ. № 6271, էջ 336բ, № 2698, էջ 177ա, № 6520, էջ 141ա, № 1488, էջ 211բ, № 7503, էջ 228ա, № 6546, էջ 221ա, № 2869, էջ 223ա։

43 Մ տ ե փ ա ն ն ո ս Օ ր ք է լ յ ա ն (Թիֆլիսյան հրատ.), էջ 520, Մատենադարան, ձեռ. № 2865, էջ 129բ։

44 Ղ. Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 288։

45 «Карта ССР Арменин».

46 «Азербайджанская ССР. Административно-территориальное деление», Баку, 1964, с. 45.

47 Մատենադարան, ձեռ. № 6271, էջ 336բ, № 6520, էջ 141ա, № 6546, էջ 220բ, № 2869, էջ 223ա, № 2698, էջ 177ա, № 2868, էջ 129բ։

48 Նուն տեղում, ձեռ. № 6271, էջ 339բ, № 1488, էջ 215բ։

49 «Հայկական ՍՍՀ վարչա-տնտեսական բաժանումը», Երևան, 1976, էջ 60։

ՊՈՂՈՍԻ ՎԱՆՔ—հիշատակվում է Պաղտսի վանք⁵⁰, Պողոսի վանք⁵¹, Պողոսի վանք⁵² ընթերցումներով: Սրա տեղագրության վերաբերյալ Ղ. Ալիշանը գրել է. «Գիլիսէքէնտ անուն, որ նշանակէ Եկեղեցագյուղ. և զի ի հին Յուսկի անդ անընդմեջ առ Շիկահողոյ դասի Պողոսի վանք, մարթէ զնոյն կարծեմ ալլազգի կոչմամբդ...»⁵³: Մենք ևս համոզված ենք, որ Քիլիսեքենդ գյուղը (Սրաշեն)⁵⁴ համապատասխանում է «գյուղացուցակում» նշված Պողոսի վանք բնակավայրին:

ԿՌԵԱՍՈՒԲԵՐԴ, ԲԵՐԴԱՔԱՐ—Մ. Հովհաննիսյանը ենթադրել է, որ դրանք դտնվել են Մոլոկում⁵⁵, սակայն Կովսականի տարածքում են: Կոնստուբերդը գտնվում է Ղափանի շրջանի Շիշկերտ գյուղից 6 կմ արևելք, համանուն լեռան գագաթին, իսկ Բերդաքարը՝ Շիկահող գյուղի հյուսիսային մասում:

ՇԱՇՈՅ ԳԵՏ—«գյուղացուցակի» ձեռագրերում տեղանունը վկայված է Շաշոյ գետ⁵⁶, Շաշի գետ⁵⁷, Շահի գետ⁵⁸, Շաշիկետ⁵⁹, Շաշգետ⁶⁰ ընթերցումներով, իսկ ալլուր՝ Յեշկիտ, Յիշկիտու («Եւ ել գնաց անտի ի Կալեր, և կալեալ անդ զՊապածէր ընդ ինքեան և անցեալ ի լերանցն հաշալու մոտեցան ի Յեշկիտ՝ գլխատեաց զՊապ, և աւար էառ զինչս նորա, մանաւանդ զի ալք շարխաստէին զնմանէ: Ապա յետ երից աւուրց չուեաց գնաց ի Յիշկետու ի դաշտավայրն Կեմանցու»)⁶¹: Համապատասխանում է Շիշկերտ գյուղին⁶², որը գտնվում է Ղափանի շրջանում⁶³:

ԲԱՐԴՈՒԹԱՔ—հայտնի է Բարդութաղ⁶⁴, Բարձութաղ⁶⁵, Բարձրաթաղ⁶⁶ ընթերցումներով: Ղ. Ալիշանի համոզմամբ Բարդաղ գյուղի անունը տեղական աղավաղված կամ կրճատված ձևն է⁶⁷, Կարծում ենք, որ տեղանվան ճիշտ ձևը իրոք եղել է Բարդութաղ, որը և ներկայիս Ադրբեջանական

50 Մատենադարան, ձեռ. № 6271, էջ 336բ:

51 Նույն տեղում, ձեռ. № 6520, էջ 141ա, № 2869, էջ 223ա, № 7503, էջ 228ա, № 6546, էջ 221ա, Ս տ ե փ ա ն ն ո ս Օ Ր Բ Ե Լ Լ ա ն (Թիֆլիսյան հրատ.), էջ 520, Մատենադարան, ձեռ. № 2698, էջ 177ա:

52 Մատենադարան, ձեռ. № 1488, էջ 212ա, № 2868, էջ 129բ:

53 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 288:

54 Զ. Կ ո Ր Կ ո տ յ ա ն, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831—1931), Երևան, 1932, էջ 60:

55 Մ ի ք ա յ Ե Լ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 387:

56 Ս տ ե փ ա ն ն ո ս Օ Ր Բ Ե Լ Լ ա ն (Թիֆլիսյան հրատ.), էջ 520, Մատենադարան, ձեռ. № 7503, էջ 228ա, № 6546, էջ 221ա, № 6520, էջ 141ա, № 2698, էջ 177ա:

57 Մատենադարան, ձեռ. № 2869, էջ 223ա, № 6271, էջ 336բ:

58 Նույն տեղում, ձեռ. № 1488, էջ 212ա:

59 Նույն տեղում, ձեռ. № 2868, էջ 129բ:

60 Նույն տեղում, ձեռ. № 6271, էջ 339բ, № 1488, էջ 215բ:

61 «Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին...», էջ 28:

62 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 288:

63 «Հայկական ՍՍՀ վարչա-տնտեսական բաժանումը», էջ 59:

64 Մատենադարան, ձեռ. № 2868, էջ 129բ, Ս տ ե փ ա ն ն ո ս Օ Ր Բ Ե Լ Լ ա ն (Թիֆլիսյան հրատ.), էջ 520:

65 Մատենադարան, ձեռ. № 6271, էջ 336բ, № 2698, էջ 177ա, № 1488, էջ 212ա, № 6546, էջ 221ա, № 6520, էջ 141ա, № 2869, էջ 223ա, № 7503, էջ 228ա:

66 Նույն տեղում, ձեռ. № 2869, էջ 223ա:

67 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 288:

ՍՍՀ Զանգեզուրի շրջանում գտնվող Բարդազ բնակավայրն է⁶⁸, Ըստ Հ. Հյուբ-շմանի, գյուղանունը կազմված է «բարդ» (դեզ) և «թաղ» բառերից⁶⁹:

ՏՈՐՎԱՆՈՏ—հիշատակվում է Տորվանոտ⁷⁰, Տարվանոտ⁷¹, Տորուանոտ⁷² րնթերցումներով: Սյունյաց Հրահատ իշխանի կողմից Կովսական գավառի նորաշենիկ գյուղը Տաթևի վանքին նվիրաբերվելու կապակցությամբ 911 թ. գրված մի կալվածագրում, որպես կողմնորոշիչ, վկայված է նաև այս տեղանունը. «...յարեկից կողմանէ Տորուանոտ սահման, և ի հիւսիսոյ՝ Մորի, և յարեմտից՝ Տրի և Արտաւագուց. ի հարաւոյ՝ Կերեն և Բերքնի...»⁷³, Գտնվել է Ղափանի շրջանի ներքին Հանդ գյուղից 7 կմ հարավ-արևելք, Սորու շայ գետակի աջ ափին: Այժմ անբնակ այս գյուղը տեղագրական մի քարտեզում հիշվում է Տարնաուտ ձևով⁷⁴, Գետակի ձախ ափին գտնվում է Կովսական գավառի Մորի գյուղը⁷⁵, Գոյովյուն ունի նաև վերևում հիշատակված Տրի բնակավայրը, որն այժմ կոչվում է Տիրի⁷⁶:

ԳՐՀԱՄ—Սյունիքի պաշտպանական նշանավոր կառույցների թվում Ս. Օրբելյանը հիշատակում է նաև Գրհամ բերդը⁷⁷, Սելջուկների արշավանքների կապակցությամբ նա այն հիշում է 1104 թ. դպրեբեր շարադրելուց հետո⁷⁸, Այս բերդը վկայված է նաև Վարդան պատմիչի կողմից, որպես 1166 թ. Սյունյաց կամ Բաղաց թագավորությունից սելջուկների գրաված ամրություններից մեկը⁷⁹, Թ. Հակոբյանը ենթադրում է, որ, Շարիփու և Փրչևան երկաթուղային կայարանների դիմաց, Սուախասար լեռնաշղթայի գագաթին գտնվող հինավուրց բերդի ավերակները Գրհամ բերդին են⁸⁰, Այդ բերդի պատմական անունը չի պահպանվել և այժմ կոչվում է Բուրջ (աշտարակ)⁸¹, Կարծում ենք, որ այն մեկ այլ ամրություն է: Բանն այն է, որ Ողջի գետի ստորին հոսանքի շրջանում գոյություն ունեն մի քանի գյուղ և գյուղատեղի (Ճակատեն, Մառագետ, Գոն, Իրիգիս, Նոր Գեղն), որոնք, ըստ Տաթևի թեմի պտղի ցուցակի, գտնվել են Գիլաբերդ գավառում⁸², Բուրջը նույնպես գտնվում է այս տարածքում⁸³: Գիլաբերդ գավառը, դատելով գավառանունից, իր

68 «Азербайджанская ССР. Административно-территориальное деление», с. 42.

69 Հ. Հյուբշման, Հին հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907, էջ 323:

70 Մատենադարան, ձեռ. № 6271, էջ 336ր, 2924, էջ 152ա, № 6546, էջ 221ա, № 2698, էջ 177ա, № 1488, էջ 212ա, № 7503, էջ 228ա, № 6520, էջ 141ա, № 2869, էջ 223ա:

71 Նույն տեղում, ձեռ. № 2868, էջ 129ր:

72 Ստեփաննոս Օրբելյան (Թիֆլիսյան հրատ.), էջ 520:

73 Նույն տեղում, էջ 209:

74 «Карта ССР Армении».

75 Գ. Մ. Գրիգորյան, Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղագրության հարցի շուրջը («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 235):

76 «Азербайджанская ССР. Административно-территориальное деление», с. 42.

77 Ստեփաննոս Օրբելյան (Թիֆլիսյան հրատ.), էջ 13:

78 Նույն տեղում, էջ 335:

79 «Հատարումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 128:

80 Թ. Խ. Հակոբյան, Նշվ. աշխ., էջ 106:

81 Հ. Հ. Աճառյան, Հայերեն արամեական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 488:

82 Բժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի, էջ 41—42:

83 Հավանական է, որ Բրջավան (Բուրջի ավան) է կոչվել ներկայիս Փրչևան բնակավայրը, որը գտնվում է բերդատեղից ներքև, Ողջի գետի ափին:

անուան անկասկած ստացել է համանուն բերդից, որը կարող է լինել միայն Բուրջը, որովհետև հիշյալ տարածքում, որքան մեզ հայտնի է, այլ բերդ չկա: Ըստ երևույթին բերդի պատմական անունը եղել է Գիլաբերդ, իսկ Բուրջ կոչվել է տեղացիների կողմից: Թերևս, Գիլաբերդը համապատասխանում է Սյունիքում հոսարով Անուշիրվան արքայի կառուցած Գիլաբ բերդին⁸⁴:

Կովսականի տարածքում գտնվում են Հալիձոր, Բերդաբար, Կոնասու-բերդ, Կադիր զալասի և Աղջկաբերդ բերդերը: Վերջին երկուսի պատմական անունները չեն պահպանվել և շատ հավանական է, որ դրանցից մեկը Գրհամն է: Կադիր զալասին գտնվում է Մեղրու շրջանի Նյուվադի գյուղից 8 կմ արևելք՝ Աբեկի և Կովսական գավառների սահմանագլխին: Այն կարող էր լինել ինչպես Կովսականի, այնպես էլ Արևիքի տարածքում:

Աղջկաբերդը գտնվում է Ղափանի շրջանի Ծավ գյուղից 2 կմ հարավ, Նավս կոչվող լեռան կողքին բարձրացող անտառապատ գագաթի վրա և հայտնի է նաև Գոհարի բերդ անունով: Այն հեռու չէ Մեղրու շրջանի Կալեր գյուղից, որը գտնվել է Գրհամ գավառի տարածքում («Յայնմ վայրի հրեշտակս աբձակեցին մեղրեցիք ի գավառն Գուրհամայ ի Կալեր»)⁸⁵, ուստի հավանական է, որ համապատասխանում է Գրհամին:

ԿՈՍԱԿԱՆ—Աղբբեջանական ՍՍՀ Ջանգելանի շրջանում հիշվում է Կոսական անունով բնակավայր⁸⁶, որը գտնվում է Ողջի գետի ձախ ափին՝ Ողջի և Արաքս գետերի ջրախառնման վայրից ոչ հեռու: Կովսականի տարածքում այս բնակավայրի առկայությունը ենթադրել է տալիս, որ գավառն իր անունը ստացել է դրանից⁸⁷: Այս տեսակետի օգտին է խոսում նաև այն, որ «գյուղացուցակում» որոշ գավառների բնակավայրերի թվում հիշվում են համանուն գյուղեր: Այսպես, Սոթք գավառում՝ Սոթք գյուղ⁸⁸, Ճահուկ գավառում՝ Ճահուկ⁸⁹, Աղահեճքում՝ Քաշաթաղ⁹⁰, որի անունով կոչվել է գավառի մի մասը⁹¹:

Այսպիսով X դ. Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին ցուցակում նշված Կովսական, ինչպես նաև նրան սահմանակից Բաղք և Մյուս Բաղք կամ Քաշունիք գավառների բնակավայրերի տեղագրության ճշտումներն⁹² ավելի որոշակի են դարձնում Կովսականի սահմանները: Պարզվում է, որ Կովսականի սահմանները նշված ժամանակաշրջանում հետևյալն էին. արևմուտյան սահմանն անցնում էր Խուստուկի հյուսիսային լեռնաճյուղով և Բասուտի արևմտյան ջրբաժանով. հյուսիս-արևելյանը՝ Ողջի գետով, որը ստո-

⁸⁴ «Հանդես ամսօրյա», 1903, № 4, էջ 125:

⁸⁵ «Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին...», էջ 30:

⁸⁶ «Азербайджанская ССР, Административно-территориальное деление», с. 42.

⁸⁷ Կովսական անունն առաջացել է Կոսական ձևից՝ «վ» հնչյունի հավելմամբ սոս-ից հետո, որը հանդիպում է նաև այլ դեպքերում (հմտ. Հակոբ>Հակովր, Սերոբ>Սերովր և այլն):

⁸⁸ Ս տ ե փ ա ն ն ո ս Օ ր ր ե լ յ ա ն (Թիֆլիսյան հրատ.), էջ 514:

⁸⁹ Նույն տեղում, էջ 522:

⁹⁰ Նույն տեղում, էջ 516:

⁹¹ Նույն տեղում, էջ 12:

⁹² Ա. Ղ ա ր ա ղ յ ո ղ յ ա ն, Պատմական Բաղք գավառի մի քանի գյուղերի տեղագրության շուրջը («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 3, էջ 237—238), ն ու լ ն ի՝ Սյունիքի Բաղք և Քաշունիք գավառների մի շարք բնակավայրերի տեղագրության շուրջը («Բանբեր Երևանի համալսարանի» 1978, № 3, էջ 193—198):

րին հասանքի շրջանում անցել է գետի ձախ ափը և հասել Հաղարի գետին։ Հետևաբար, գավառի տարածքը համապատասխանել է ՀՍՍՀ Ղափանի շրջանի հարավային մասին և Ադրբեջանական ՍՍՀ Զանգեզուրի շրջանին, բացառութեամբ Գյումրիային մասի որոշ համակածները։

ЛОКАЛИЗАЦИЯ УЕЗДА КОВСАКАН ПРОВИНЦИИ СЮНИК (X в.)

АРМЕН КАРАГЕЗЯН

Резюме

Уезд Ковсакан провинции Сюник впервые упоминается в «Армянской географии» VII в. В IX в. уезд принадлежал одному из княжеских родов Сюника. Поселения уезда Ковсакан числятся в податном списке Татевского монастыря X в. Из документа 1086 г. известно, что при сюникском царе Григоре князь Хасан освободил уезд от полчищ эмира Патлуна. В XIII в. уезд Ковсакан был переименован в Грхам, по названию нового центра уезда.

На основе данных письменных источников и результатов наших исследований удалось установить локализацию уезда Ковсакан. В X в. территория уезда ограничивалась на западе северными склонами горного хребта Хуступ и водоразделом реки Цав, на северо-востоке—водоразделом реки Вохчи, а на юге и востоке границей служили реки Аракс и Акера.

Территория, на которой был расположен уезд, в настоящее время соответствует территории южной части Кафанского района Армянской ССР и Зангеланского района Азербайджанской ССР, за исключением его некоторых северных частей.